ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 30>> մարտ 2016թ. N 30
ք. Եղեգնաձոր

ԱՆԼԱՐ ԻՆՏԵՐՆԵՏԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳՆՎԱԾ ԳՈՒՅՔՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԾՐԱԳՐՈՎ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածի 1-ին մասով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016թ. մարտի 10-ի թիվ 234-Ա որոշումը՝

Որոշում եմ՝

1. Ընդունել Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2011 թվականի հունվարի 26-ին ստորագրված «Էլ.-հասարակության և մրցունակության համար նորարարության ծրագիր» N 7963-AM վարկային համաձայնագրի «Ազգային լայնաշերտ ինտերնետային հիմնացանց և կառավարական ցանց» ենթաբաղադրիչի շրջանակում իրականացվող՝ Հայաստանի Հանրապետության հեռավոր, սահմանամերձ, բարձր լեռնային, լեռնային, մինչև 1000 բնակիչ ունեցող գյուղական բնակավայրերում անլար (Wi-Fi) ինտերնետի հասանելիության կետերի տեղադրման ծրագրի շրջանակում «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի կողմից մատակարարված, ծրագրի շրջանակում համայնքներում տեղադրված և 2014 թվականի դեկտեմբերից շահագործվող ընդհանուր թվով 9 անլար (Wi-Fi երթուղիչ) ինտերնետ սարքավորումները որպես պետական սեփականություն՝ դրանք ծրագրով ընտրված գյուղական համայնքներին հանձնելու նպատակով:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված անլար երթուղիչները նվիրաբերել ծրագրով ընտրված գյուղական համայնքներին՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2016թ. մարտի 30-ի
թիվ 30 որոշման

ՑԱՆԿ

ծրագրով ընտրված մարզի համայնքների, որոնց նվիրաբերվում են HUAWEI B68A WIRELESS GATEWAY V100R001 մակնիշի անլար (wifi երթուղիչ) ինտերնետ սարքավորումներ (ըստ սերիական համարների)

N	Բնակավայր	Համայնք	Տարածաշրջան	Սարքի սերիալ համար
1	Գնդեվազ	Գնդեվազ	Վայք	G9W9K148070 00256
2	Զեղեա	Զեղեա	Վայք	G9W9K148070 00292
3	Ամաղու	Արենի	Եղեգնաձոր	G9W9K148070 00261
4	Ուղեձոր	Սարավան	Վայք	G9W9K148070 00281
5	Ռինդ	Ռինդ	Եղեգնաձոր	G9W9K148070 00515
6	Բարձրունի	Բարձրունի	Վայք	G9W9K148070 00004
7	Արենի	Արենի	Եղեգնաձոր	G9W9K148070 00218
8	Ելփին	Ելփին	Եղեգնաձոր	G9W9K148070 00249
9	Չիվա	Չիվա	Եղեգնաձոր	G9W9K148070 00265

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար՝ **Կ. Սահակյան**